(ատաճիավարձ) սահնում է ու հեռանում։ Եւ ա-մեն անգամ էլ հարցնելիս է եղել մերոնց, թէ «Տէրտէր աղան ե՞րբ պիտի գնայ,—վատղի իմ որդիս ուզում է տեսնել նրան և պատուել, ինչով որ կարող է»։ Մերոնք ամեն օր փսփսում են ի-րար ականջում մի ինչ-որ ծածուկ բան և ինձ չեն ասում, որպէսզի երեխաներս չվախենան։ Բայց ես յանդիմանեցի եղբայրներիս, թէ ին-չո՞ւ էք ձեր շէմքից ներս թողնում ամեն մի պա-տահական արարածի, քանի որ նրանցից բացի վնասից, ուրիշ ոչ մի օգուտ չունիք։—Տէր հայր ջան, բայց դու գիտե՞ս այս այլանդակ պատաւ թրքուհին ո՛վ է։—Ոչ, չգիտեմ. ասացէք ինձ, ո՛վ է նա և ի՞նչ կախում ունիք նրանից։—Նա մայրն է այն արիւնարբու թուրք աւազակապետի, որ մի քանի անգամ փախել է Սիբիրից և այժմ իւր նման աւազակների գլուխն անցած՝ թալանում, կողոպտում է իրեն պատահող անզէն գիւղացի-ներին, իսկ այժմ եկել է մեր գիւղը և իջել է իւր ազգական մի թուրքի մօտ։

—Ամեն օր մեր գիւղի կալերի մօտից յա-փշտակում է Հայ քրիստոնեայ երեխաներ, որոնց ծնողներից 15—25 և 30 ռուբլի փրկանք առնե-լուց յետոյ, նրանց ազատ է թողնում։

Իսկոյն մի նամակ գրեցի, որ ուղարկեմ գա-ւառական ոստիկանին, բայց ոչ ոք չհամարձա-կուեց տանել ու հասցնել։ Երկիւղ կրելով, որ նամակս եթէ թուրք աւազակների ձեռքն ընկնի, իրենց կեանքը վտանգի պիտի ենթարկուի։ Ինքս կամեցայ ձի նստել, գնալ ոստիկանի մօտ և հաս-